

ԴԵՊԻ ԱՆՀՈՒՆԸ

I

Հընչում էր փրփրուն վրտակն արծաթի,
Արևը խաղում պայծառ կապոյտում...
Առանց հոգսերի ու առանց վրշտի
Խաղում էինք մենք այն երազ հովտում,
Ու թընդում էր հեշտ ծիծաղն ինձ ծաղրող.
— Չես կարող, չէ՛, չես կարող...

Չէի կարենում բըռնել ես նըրան:
Ճերմակին տալով՝ ծառերի ետև
Ծածկըում էր նա աչքէս անդուման,
Կըրկին յայտնըում ճապուկ ու թեթև,
Ու թընդում էր միշտ ծիծաղն ինձ ծաղրող.
— Չես կարող, չէ՛, չես կարող...

Մին էլ ես ճարպիկ մի շարժում արի,
Բըռնեցի նըրան. յանկարծ նա ճըչաց,
Չեռքումբս դարձաւ ճերմակ աղանի,
Ու թեին արաւ, ու թըռաւ, գընաց,
Գընաց ճախրելով այն երազ հովտում,
Սուգուեց, չըքացաւ պայծառ կապոյտում...

II

Վեր թըռայ բընից, դուրսը նայեցի.
 Արևը ուրախ զարկել էր սարին,
 Բընութիւնն անհոգ, թարմ ու նազելի
 Զուգւում էր, ժըպտում մանուկ արեւին:
 Գիշերն անցել էր, բայց իր ետեից
 Մըռայլ էր թողել դեռ ցած՝ հովիտում:
 Այդպէս տակաւին անցած երազից
 Խաւար մի բան կար նըստած իմ սըրտում:
 Թէկուզ երազին չես էլ հաւատում,
 Բայց օտար տեղում, քո տանից հեռու,
 Սիրտդ մի յամառ կասկած է մըտնում,
 Թէ՛ մի մահագոյժ սե բօթ է գալու...
 Յասմիկն երազում աղանի դառաւ,
 Աղանի դառաւ՝ իմ ձեռքից թըռաւ...
 Լոկ երա՞զ էր այս: Բայց երազն ինչ է:
 Երազ, թէ իրօք—այդ միթէ մի՞նչ չէ,
 Երազն էլ երբոր կարող է կանչել,
 Կարող է յուզել, խընդացնել, տանջել...
 Յասմիկն ապրում էր—Յասմիկը մեռաւ...
 Երազը եկաւ—երազը թըռաւ...
 Կեանքը երազ է, երազն էլ մի կեանք,
 Երկուսն էլ անցուր, երկուսն էլ պատրանք.
 Եւ թէ հաստատուն մի բան կայ անմահ,
 Արդեօք իմաստուն հոգին չէ՞ միայն նա,
 Որ թէ յարթըմնի և թէ երազում
 Ապրում է, տեսնում, զգում ու յուզւում...

Ու գիր է գալիս ահա իմ տանից,
 Թէ՛ կինըս հիւանդ—ըսպասում է ինձ...

III

Տո՛ւն, տո՛ւն, դէպի տուն
 Թըռչում եմ արթուն,
 Որպէս երազում:
 Շուրջըս ամեն բան
 Շտապ, ինձ նըման,
 Անցնում է վազում:

Շըշմած գըլխիս մէջ
 Գալիս են անվերջ
 Ու ճընշում իրար
 Զանազան դէպքեր,
 Յուշեր ու մըտքեր
 Պայծառ ու խաւար...

Տեսնում եմ նըբան՝
 Կանգնած է դարնան
 Շողերի միջին
 Ու ժրպտում է ինձ
 Իր պատուհանից՝
 Ծաղիկը լանջին...

Տեսնում եմ մ'եռած,
 Ծաղկով զարդարած,
 Դըրած դադաղում,
 Տըխրալի մի օր,
 Արտասուք, սըգւոր,
 Սեւեր ու թաղում...

Տո՛ւն, տո՛ւն, դէպի տուն.
 Ու միւս իրիկուն
 Մեր տան դէմ ելայ.
 Մի սե, սե զանգուած՝
 Կուտակուած, կանգնած



Մեր դըռանն ահա...
 Պըտոյտ է գալիս
 Աշխարքը գըլխիս,
 Երկինքը մըթնում...
 Ողջ կանգնած են լուռ,
 Ու ներսից տըխուր
 Չայներ են թընդում...

19

Սըգւորի միջին, խունկի ծըխի տակ
 Աչքովըս ընկաւ դադաղը ճերմակ,
 Ու... տեսայ նըրան դադաղում պառկած,
 Երեսը դալուկ, աչքերը փակուած...
 Առաջըս մըթնեց, տեղըս կորցըրի.
 Մարդից, արեից, աշխարքից հեռի,
 Մի անտակ ձորում, սե՛ռ ու խոր ջըրում
 Տարւում էի ես, խեղդւում չարչարւում.
 Բարձր էին ափերն, ողորկ ու դըժար,
 Մի թուփ չը կար գէթ բռնելու համար,
 Չը կար կենդանի ձայն, ըստուեր, նըշան,
 Որ կարենայի կանչել օգնութեան...

V

Երբ ուշքի եկայ, աչքըս բաց արի՛
 Տեսայ նըստոտած մարդիկ շըշընջում,
 Անտարբեր թեքուած՝ իրար ականջում
 Խօսում են ուրիշ բաների վըրայ
 Ու ոմանք ժըպտո՜ւմ, ժպտում աշկարայ...
 Իսկ կողքիս նըստած ալեւոր մի մարդ
 Խօսում էր ինձ հետ, խըրատում հանդարտ...
 —Մի լար, սիրելիս, երեխայ չես դու,
 Ինչքան էլ որ լաս—իզուր ես լալու.
 Քո ձայնը երբէք էլ չի լըսիլ նա,

Ոչ կը հասկանայ, ոչ էլ ետ կը գայ.
Այսպէս կամեցաւ Աստուած, երեւի,
Որ նրբա օրը շուտով խաւարի...
Մենք հողերէններս՝ անճար ու չընչին,
Ի՞նչ ենք Աստուծոյ կամքի առաջին...
Բաց է այս ճանպէն ամենքիս համար.
Ծեր, երիտասարդ, մեղաւոր, արդար,
Ամենք, ամենքը, այստեղ ինչ որ կան,
Այսօր թէ էգուց ամենքը կ'երթան.
Ով որ կը մընայ,
Թող նա պարծենայ:

VI

Ես լըսում էի: Ու յանկարծ ես էլ
Ուզեցի հաշտուել հըզօր մահի հետ,
Անճար, ակամայ սկսայ մըտածել,
Թէ մահը լաւն է, միայն մենք՝ տղէտ,
Մենք՝ խեղճ, կարճամիտ ու չենք հասկանում՝
Ինչպէս է գալիս և ուր է տանում,
Թէ՛ և՛ կեանք, և՛ մահ, անցաւոր, ունայն
Մի մեծ յաւերժի ձևերն են միայն,
Ինչպէս որ ահա երեկն ու այսօր:
Այսօրն ինչ է որ,—մի երեկ է նոր,
Այսօրն էլ կանցնի, երեկ կը դառնայ,
Եւ սակայն կըրկին միեւնոյն է նա:
Եւ այսպէս անվերջ այսօր ու երեկ
Փոփոխուում են միայն, միշտ մընում է մէկ—
Մէկ մեծ ժամանակ: Այսպէս և հողին
Փոփոխում է միայն,—կեղևն արտաքին—
Մարմինն՝ այսօրուան օրին նըմանակ,
Իսկ ինքը անվերջ, ինչպէս ժամանակ:
Կամ ևս սիրուն,—հոսանում մի գետ,
Որ հազար ալիք ու ծրփանք ունի.
Գալիս են ալիք, անցնում են անհետ,

Անցնում են դէպի անդունդն ուկիրանի,
Ուր ամեն ալիք, ուր ամեն մի կաթ
Ապրում է դարձեալ անվերջ, անընդհատ...

Այսպէս փոխուելով հոսում է, գընում,
Գընում անհունի անճառ սահմանում
Դէպի գերազանց վիճակն երջանիկ,
Ակն երջանկութեան, սիրոյ հայրենիք,
Ուր չը կան մարդիկ և ոչ ըզգացում,
Ուր ողջին մի մեծ կեանք է միացնում...
Եւ ի՞նչ է սիրոյ իմաստը վերին,
Ի՞նչ երջանկութեան խորհուրդը խորին,
Հալուել, միանալ,
Իրեն մոռանալ...

—

Եւ անշուշտ մի օր, հանդերձեալ կեանքում,
Երկրում թէ այլուր, վերե՛ւ երկընքում,
Էն անյայտ ճանաչով, որով նա գնաց,
Ես էլ կը թըռչեմ աշխարհը թողած,
Ու կը զգամ նրբան, կ'ապրեմ նրբա հետ
Մի ուրիշ անվերջ կեանքով երկնաւէտ...

VII

Բայց ես միշտ թագուն մի յոյս ունէի,
Թէ կարող էր նա լինել... կենդանի...
Մի տեղ մի անգամ այդպէս է եղել.
Տարեւ են մէկին, ուղեւ են թաղել,
Շիրմի փոսի մէջ զարթնել է յանկարծ:
Կարող էր և մեզ լինել պատահած...

VIII

—Ո՛չ, ո՛չ, նա գընաց, էլ ետ չի գալու,
Եւ այդպէս դու միշտ մեղք ես մընալու:
Թէկուզ և հագնես երկաթի տրբելս,

Փընտրես՝ կանչելով աշխարհ բովանդակ,
 էլ չես հանդիպիլ նրան ոչ մի տեղ,
 Ոչ մի աշխարհում, ոչ մի ժամանակ...
 Այն պաղ գիակն էլ, որ տեսնում ես դեռ,
 Այն էլ հողի տակ կը ծածկեն հիմայ,
 Կըգնան, կըգան տարիքն անտարբեր,
 Ու նա կը փրթի, նա հող կը դառնայ,
 Անունն էլ ապրող աշխարհի համար
 Դատարկ մի հնչիւն, անխորհուրդ մի բառ...
 Այն էլ կը կորչի, ինչպէս որ չը կայ
 Անձնն ու հետքը էն հին աղջկայ,
 Որ ձեզնից առաջ հազար տարիներ
 Նոյնպէս սիրահար ու ժըպիտ ունէր:
 Եւ ի՞նչ է մարդը, և ի՞նչ իրեն կեանք.
 Եղծական ձևեր, ձայներ, շարժումներ,
 Յաւերժականը չ'ունի կերպարանք,
 Նա լուռ է, անշարժ, հաստատ, աներեր...
 Անողոր մի ձայն այսպէս ինձ կանչում,
 Տանջում էր հողիս, խորտակում, ճընշում:
 Ժիգ էի անում նրան լըռեցնել,
 Սիրտըս էլ հետը պոկել, հեռացնել
 Ու գրտնել մի ձայն, մի հըչիւն, մի բառ,
 Որ կեանքի, յոյսի նըշոյլ ունենար...
 Ուզեցի «Աստուած» մին աղաղակել,
 Բայց չէ՞ որ նա էր այն մահն ուղարկել:

IX

Մի անհուն ցաւի մըրմուռի նըման
 Ծաւալում էին զանգերը թաղման,
 Ու ժամի ծըխտո կամարների տակ
 Կանգնած էր արդէն տըխուր պատարագ,
 Տըխուր պատարագ, տըխուր մեղեդիք,
 Տըխուր աղօթքներ ու տըխուր մարդիկ,
 Մէջ տեղը ճերմակ դագաղը նրա

Դըրած սեւաքօղ սեղանի վըրայ,
 Ու նա դադաղում ասես թէ քնած,
 Հարսնական ճերմակ շորով պճնուած,
 Անփոյթ, անզգայ կեանքին ու մահուան,
 Իր դադաղն ածած վարդերի նրման...
 Այստեղ՝ բռնուած մի նոր տաղնապով՝
 Ուզեցի գըտնել մըտքի մի թափով,
 Թէ ի՞նչ էր արդեօք, այն ի՞նչ էր լինում,
 Ի՞նչ էր պատահել, նա ո՞ւր էր գլնում...
 Եւ իսկոյն, ասես, դիպայ մի քարի:
 Մըտքերըս հատան: Առանց մըտքերի
 Կանգնած էի ես խորտակուած ու պաղ.
 Լուռ էր: Հոգեւոր երգերը մենակ
 Ծաւալում էին վրսեմ ու խաղաղ:
 Ես լըսում էի, լըսում շարունակ:

«Այս անցաւոր երկրի վըրայ
 Լըցան օրերն պանդըխտութեան,
 Երկնասըլաց գընում է նա,
 Հագած մարմին անապական,
 Անմահացած մահկանացուն՝
 Միանալու իր Աստըծուն:

Այնտեղ, վերին Երուսաղէմ,
 Օթեանում հրեշտակաց,
 Ուր որ Ենովք ու Եղիաս,
 Աղանակերպ կան ծերացած,
 Այն աշխարհում անտըխրական
 Արդարքն ապրում են յաւիտեան:

Եթե՛նաստեղեան լոյս խորանում,
 Ուր ցաւ չը կայ, ոչ հեծութիւն,
 Ընտրեալ հոգիքն ուրախանում,
 Խայտում էր միշտ անվե՛րջ, անհո՛ւն

Բերկրանքներով յարազուարճ,
Աստծոյ զուարթ աչքի առաջ:

Այնտեղ նըրանք, միշտ բախտաւոր,
Նայում են Հօր լոյս երեսին,
Նըրա առջև պաղատաւոր
Նըրանց համար, որ թողեցին...
Ու իջնում են, մխիթարում
Մեզ տըրտմալի այս աշխարհում»...

Թովուած, կախարդուած, տարուած այն երգին,
Վերացաւ, թըռաւ իմ վշտոտ հոգին
Դէպի երջանիկ մի ուրիշ աշխարհ,
Անյայտ ու հեռու, անծանօթ, օտար...
Եւ այն աշխարհը հըրաշալի էր.
Ոչ սուգ կար այնտեղ, ոչ վայելք, ոչ սէր,
Ոչ կարելի էր կորցընել մի բան
Եւ ոչ ունենալ քաղց ագահութեան:
Որպէս գերեզման եւ ունայնութիւն՝
Լուռ էր ու դատարկ, անփառք ու անհուն.
Որպէս հայեացքը մեռելի աչքի՝
Մի միաք ունէր միշտ առանց յուզմունքի,
Հոգեղէն մարդուն անյայտ խորհըրդով
Յաւիտեան սառած, խաղաղ, անվըրդով...
Ու անշարժ կանգնած, դալուկ ու լըռիկ,
Ստուերներ էին անմարմին մարդիկ
Տըժգոյն, անարեւ, աղօտ լուսի մէջ
Աղօթում էին անձայն ու անվերջ,
Աղօթքն էլ սակայն ոչինչ չէր խընդրում,
Ոչ ազատութիւն, ոչ մահ, ոչ խընդում...

X

Յանկարծ լըռութիւնն ինձ ուչքի բերաւ,
Աչքիս առջևից հըրաշքը թըռաւ:

Պատարագն արդէն վերջացրել էին։
 Դագաղը շարժուեց, թրնդաց ահագին
 Սասանիչ երգը մահուան սարսափի,
 Այն լացն ու կոծը, օրհներգը մահի,
 Որով մեռելին հրաժեշտ են տալիս
 Դէպի գերեզման ճանպուղընելիս,
 Երբ ծառս է լինում վիշտը մայրական
 Դէպ գահն Արարչի—ղըրկողը մահուան,
 Արձակում ցասկոտ իր ճիւղ յետին
 Ու թոյլ, յուսահատ ընկնում է գետին։

XI

Դուրս եկանք դուռը։ Նայեցի վերև։
 Վերևն, ինչպէս միշտ, փայլում էր արև.
 Բոլորն աշխարհում կարգին ու հանդարտ,
 Ու ինչպէս երեկ՝ այնպէս ամեն մարդ...
 Բայց երկինքն այնքան պայծառ էր այնօր,
 Եւ պայծառութիւնն այնքան էր տըրտում,
 Տըրտմութիւնն այնքան խոր, հանդիսաւոր,
 Որ թըւում էր ինձ, թէ ջինջ կապոյտում՝
 Վերջին հրաժեշտ տալով աշխարհին՝
 Ճախրում էր նըրա հեռացող հոգին...
 Ու մըտքովս անցաւ, յանկարծ, ակամայ,
 Թէ արդեօք նըրա աչքերը անմահ
 Նայում են ներքև, տեսնում են ինձ էլ,
 Թէ ոնց եմ ցաւիս տակին կորացել...
 Եւ կամ ո՞րն է նա. այն շողն է պայծառ,
 Որ զուարթ խաղով, աշխոյժ աւ կայտառ
 Կորչում է, մըտնում թուխպ ամպի ետև,
 Ագատ, երկնաչու այն ամպն է թեթև,
 Թէ այն աղաւնին, որ հիմայ թըռաւ,
 Անփոյթ ճախրելով ջինջ օդում կորաւ...

XII

Յանգճւղըն մըտքեր, ուր էք սըլանում,
 Ի՞նչ էք որոնում այն մութ սահմանում,
 Ահա մեր կեանքի սահմանը վերջին,
 Այս սե ու տըխուր թումբերը չընչին...
 Լճու գերեզմաններ, քանի՜ սըգաւոր
 Ձեզ եգերքներին կանգնել են մի օր,
 Այս դատարկ կեանքին, անհաստատ բախտին
 Անէծքներ տալով բեկուել, հեռացել,
 Երբ որ սիրածի դագաղը մըթին
 Վիհ են իջեցրել ու դէմքը ծածկել...
 Եւ ճրքան ըզձեր, սըրտեր ու զգացմունք
 Թաղուած են, մարած ձեր լուռ փոսերում:
 Ահա ե՛ մի նոր բարձրացած սե թումբ,
 Դեռ թաց է հողը, դեռ խունկ է բուրում,
 Իսկ մենք ուզում ենք ուրիշին թաղել,
 Որ ապրում էր դեռ երկու օր առաջ...
 Եւ անշուշտ մի օր սըրա շիրիմն էլ
 Կը ծածկի նոյնպէս մամուռը կանաչ,
 Կ'անի հաւասար քարին ու հողին,
 Ինչպէս դըրացու անկողինը հին.
 Նըրանից յետոյ դէ եկ՝ իմացիր,
 Թէ ով է թաղուած քու ոտի տակին,
 Ի՞նչ ցեղից էր նա, ի՞նչ ձիրքեր ունէր,
 Անահ հերոս էր, գեղանի մի կին,
 Անհոգ մի ջահիլ, անկըշտում ագաճ,
 Աղքատ, թէ հարստատ.— ձայն, նըշան չը կայ...

XIII

Բայց... ի՞նչում էր նա ընմիշտ իմ աչքից,
 Կեանքից, արեւից, այս լոյս աշխարհից...
 Կորացայ, վերջին համբոյրըս տուի

Ու այն համբոյրով դագաղում գրբի
 Խընդում, սէր, ըղձեր, ամէն, ամէն բան...
 Ինձ ետ բաշեցին, մի կողմը տարան:
 Իսկոյն հետեւեց խուլ գրգռուցը,
 Քարով ու հողով լըցրին այն փոսը,
 Դագաղն էլ, ինքն էլ ծածկուեցին յանկարծ,
 Ասես թէ բընաւ աշխարհ չէր եկած,
 Եւ այսուհետեւ երբէք, յաւիտեան
 Էլ չի տեսնելու արեւը նըրան...
 Յուզարկներն այնժամ մօտ եկան մի-մի.
 —է՛հ, Աստուած նըրա հոգուն ողորմի.
 Մենք էլ ենք մի օր այսպէս գընալու,
 Ո՛րվ է աշխարհիս վըրայ մընալու.
 Կեանքն էլ է դատարկ, մարդն էլ է դատարկ,
 Անցաւոր են ողջ—բախտ, վայելք ու փառք...
 Ասացին հանգիստ՝ հոգոց հանելով
 Ու դարձեալ հանգիստ զրոյց անելով
 Գընացին իրենց տըները անհոգ:
 Շուրջըս նայեցի, չէր լալիս ոչ ոք.
 Երկինքն էլ այնպէս պայծառ ու հանդարտ.
 Եւ ինչպէս երեկ, այնպէս ամէն մարդ...

XIV

Եկաւ գիշերը: Իմ յոգնած հոգուն
 Իջաւ տանջալի մի խաղաղութիւն:
 Վայր ընկայ՝ ինչպէս ուժաթափ մի բան,
 Որ զգում է միայն կարօտ հանգըստեան,
 Բայց ճըգնում է դեռ, աշխատում ունայն,
 Ուզում է յիշել, թէ ինչ բան էր այն,
 Մի խառն երանգ էր, մի աշխարհ ուրիշ,
 Գինու մի քէֆ էր, ծաղը՞ր թէ՞ պատիժ...
 Մըրափը սակայն ծանրը ու դանդաղ
 Չոքեց ինձ վըրայ սե թեւերը կախ,
 Միտքըս իր թեւը կըտրեց ու թըռաւ,

Անհուն, խաւարչտին քառսում կորաւ,
Մահ, մեռել, շիրիմ—թեթե հեռացան
Ու հեռանալով փոխուեցին, դարձան
Ամպեր, ստուերներ, կէտեր երերուն,
Դողացին, հանգան, ու մըթնեց հեռուն...
Կարճատե մի քուն եկաւ ինձ վըրայ,
Եւ ես միւս անգամ երազում տեսայ.

XV

Հընչում էր փրփրուն վրտակն արծաթի,
Արեւը խաղում պայծառ կապոյտում...
Առանց կորուստի ու առանց վըշտի
Կանգնած էի ես այն երազ հովտում:

Շուրջըս շուշաններ, անվերջ շուշաններ,
Լիքն էր անտառը անուշ բուրմունքով,
Եւ եղեմական ներդաշնակ ձայներ
Փառք էին տալի թովչական երգով.

«Փառք անպատում մըխիթարչին,
Փառք խորհուրդին անմահութեան.
Նա է կըրում յոյսը վերջին
Ու շողն անշէջ, արարչական,
Փառք խորհուրդին անմահութեան:

Նա գընում է բարձր ու անվերջ
Դէպի անհունն ու յաւիտեան,
Վիշտը հանգչում է նըրա մէջ,
Ապրում սէրը անապական.
Փառք խորհուրդին անմահութեան»...

Ու զողանջում է անտառի միջից
Քընքոյշ ու զուարթ ձայնը սիրելի,

Անյայտ ու անտես կանչում է նա ինձ,
կանչում գերբնական մի ուրիշ կեանքի.

«Արի՛ ինձ հետ, իմ թըշուճու,
Ես քեզ տանեմ մի աշխարհ,
Ուր չը կայ մահ, անջատում,
Ու սէրն անվերջ, անհատնում...
Արի՛, թըռի՛ր, գընանք ինձ հետ,
Անցա՛ւ, անհոգ, անյո՛ւշ, անհե՛տ»...

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

1894 թ.